Հարգելի նախարար, համաժողովի հարգարժան մասնակիցներ

Բոլոր ժամանակներում մեր դպրոցը ունեցել, պահպանել և զարգացրել է իր առանձնահատուկ ազգային նկարագիրը: Նույնիսկ խորհրդային դպրոցի ժամանակաշրջանում մեր ազգային դպրոցի շնորհիվ է, որ նոր որակների և դրսևորումների է հասել մեր մշակույթն ու բանահյուսությունը:

Այսօր, ավելի քան կարևոր է, որ հայ մարդու դաստիարակման հիմքում լինի ազգային արժեքների, ավանդույթների պահպանումն ու զարգացումը, արժեվորվի հայ ընտանիքի տեսակն ու դերը մեր ազգի, մեր պետականության կայացման ու հարատևման գործում:

Հայ ընտանիքը մեր ազգային նկարագրի ամենախոսուն պատկերն է:

Ես ուզում եմ, որ մեր մանկավարժները, անկախ մասնագիտությունից, իրենց ստեղծագործ աշխատանքում պահպանեն և փոխանցեն այս նկարագիրը մեր սերունդներին:

Իսկ փոխանցման լավագույն միջոցն ու օրինակը սեփական նկարագիրն է:

Բոլորս էլ գիտենք, որ մեր երեխաների առաջին երևելի կերպարը կամ ծնողն է, կամ ուսուցիչը:

Հորդորում, պահանջում և խնդրում եմ Ձեզ, Ձեր շնորհակալ գործը կատարեք նվիրումով, քանզի այսօր աշխարհի տարատեսակ զարգացումների շրջանում մեր տեսակի, մեր նկարագրի պահպանումն ու բարգավաճումը առանցքային խնդիր է:

Անշուշտ, մեր դպրոցի առաջադիմական զարգացման համար կարևոր նախապայմաններ են նաև նորոգ և բարեկարգ շինություններ, նյութատեխնիկական միջոցներ ունենալը:

Մեր պետականության կայացման առաջին իսկ տարիներից զգացվել է կրթության հանդեպ պետության առանձնահատուկ հոգածությունը՝ դպրոցին ու դպրոցաշինությանը ցուցաբերած նպատակասլաց ու հատուկ վերաբերմունքով:

Դպրոցաշինությունը մեր երկրում առաջնահերթություններից է: Միայն այս տարի մարզում վերանորոգվել է 24, կառուցվել է 2 դպրոց:

Շարունակվում են դպրոցների գազաֆիկացումը և լոկալ կաթսայատների կառուցումը:

Անցած տարիներին ձեռք բերված բազմաթիվ հաջողությունները որքան էլ ակնառու լինեն, միևնույն է, անելիքներն ավելի շատ են:

Մենք ունենք բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ կապված և դպրոցաշինության, և կրթական պրոցեսի հետ: Եվ դրանց լուծման հարցում անելիքներ ունեն և մարզպետարանը, և կրթության ոլորտի ղեկավար անձնակազմը:

Այսօր կլինի հաշվետվություն, կխոսի կրթության նախարարը, կնշվեն մեր անելիքները:

Ես խնդրում եմ նաև , որ դուք լինեք ակտիվ մասնակիցն այս բոլոր քննարկումների:

Չէ որ հայ դպրոցի հետևողական զարգացման խնդիրն ու հոգածությունը բոլորինս է, յուրաքանչյուր հայ մտավորականի պարտքն ու առաքելությունը:

Այս նախատոնական օրը ուզում եմ անդրադառնալ ևս մեկ խնդրի՝ մարզի հասարակական կյանքին մանկավարժների մասնակցության հարցին: Շատ եմ կարևորում մանկավարժների ակտիվությունը:

Ավելի կոնկրետ խոսքս վերաբերվում է տարատեսակ պրոցեսներին մանկավարժի խոսքի արժեքին:

Եթե իմ հարևանը, որն ունի որոշակի հեղինակություն և խելք ու լռում է, ապա խոսելու է մեկ ուրիշը, որ չունենալով նշածս որակները դառնում է դրության տերը: Խոսքս ունի ենթատեքստ, որն իմ կարծիքով ընկալելի է:

Հորդորում եմ լինել ավելի ակտիվ և սրտացավ:

Այսօր նոր ուսումնական տարվա շեմին, գիտելիքի օրվան ընդառաջ շնորհավորում եմ Ձեզ՝ կրթության համակարգի աշխատողներիդ և աշակերտներին՝ հատկապես այս ուսումնական տարում առաջին դասարան հաճախողներին, ցանկանում, որ նոր ուսումնական տարին լինի ստեղծագործ աշխատանքի և հաջողությունների տարի: